ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 հունվարի 2021թ.

ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Բաղալով

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Ասատուր Ասատրյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի, N 1 չափաբաժնի մասով, գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման և գնահատման արդյունքների ամփոփման մասին.

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 20.11.2020թ. հրապարակվել է www.armeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2020 թվականի դեկտեմբերի 30-ին, ժամը՝ 11:30-ին armeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2021թ.-ի ընթացքում ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի մասնաշենքում օդափոխության, համատեղված ջեռուցման հետ և օդորակման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով՝ բաց մրցույթի միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի 30 դեկտեմբերի ժամը՝ 11:30-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N 1 չափաբաժնի մասով նիստը կասեցնել և «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ին, «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ին և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի է ունեցել 11.01.2021 թվականին ժամը 11:30-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: Նիստին ներկա էին «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը՝ Արթուր Կառլենի Սիմոնյանը՝ համապատասխան լիազորագրով, «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սայրան Արիստակեսյանը և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի տնօրեն՝ Դավիթ Եսայանը, իրենց անձը հաստատող փաստաթղթերով:

1.4 Միաժամանակյա բանակցությունների նիստի վարման ժամանակ գնահատող հանձնաժողովն առաջարկեց միաժամանակյա բանակցությունների համար սահմանել 15 րոպե ժամանակ և բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները: Միաժամանակ որոշվեց գների նվազեցման յուրաքանչյուր քայլի նվազագույն չեմը սահմանել 500000 ՀՀ դրամը: Միաժամանակյա բանակցությունների նշված ձևաչափը հավանության արժանացավ բոլոր երեք մասնակիցների կողմից: Գների նվազեցումը սկսվեց կատարվել 1-ին տեղ զբաղեցրած՝ «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկից՝ 900000000 ՀՀ դրամից, որը համարվեց մեկնարկային գին:

1.5 Ստորև ներկայացվում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստի ընթացքում, բանակցությունների համար սահմանված ժամանակի ավարտին, նիստին ներկա գտնվող բոլոր մասնակիցների կողմից ներկայացրած նվազեցված գնային առաջարկները.

Չափաբաժին	Անվանում	Մինչև բանակցությունները սկսելը նվազագույն գնային առաջարկ, ա ԱԱՀ-ն ներառյալ /ՀՀ դրամ/	Մասնակիցների նվազեցված գնային առաջարկները (ՀՀ դրամ)			
			Մասնակցի անվանում	Նվազեցված գնային առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի մասնաշենքում օդափոխության, համատեղված ջեռուվման հետ և օդորակման համակարգի կառուցման շինարարական աշխատանքներ	900.000.000	«Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ	679.166.667	135.833.333	815.000.000
			«Ագաթ-777» ՍՊԸ	688.148.143	137.629.628	825.777.771
			«Գրիգորյան Շին» ՍՊԸ	699.166.667	139.833.333	839.000.000

1.6 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2021թ.-ի ընթացքում ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի մասնաշենքում օդափոխության, համատեղված ջեռուցման հետ և օդորակման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով, բաց մրցույթի միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի՝ N 1 չափաբաժնի մասով, ընտրված մասնակից ճանաչել «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացնողի:

1.7 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

1.8 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաղալով

Քարտուղար՝ ---------- Ն. Աբովյան

Գնահատող անդամներ

1 ---------- Հ. Հովհաննիսյան

2 ---------- Ա. Ասատրյան